ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 հունիսի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

87
(2937)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԸ ՈՒԶՈՒՄ Է ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀՀ առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանի նկատմամբ թիմի ներսում առկա վերաբերմունքին բազմիցս ենք անդրադարձել՝ նշելով, որ Թորոսյանին, մեղմ ասած, յուրային չեն ընդունում, ու նա մնացել է մենակ իր պատգամավորական աթոռով եւ covid 19-ի ծախսերի մասով հարուցված քրեական գործերով: Մեր աղբյուրները հայտնում են, որ Թորոսյանը, օգտագործելով ՔՊ վարչության կազմում իր ներկայությունը, նորից սկսել է փորձեր անել՝ վերադառնալու իր նախորդ պաշտոնին՝ վարչապետի աշխատակազմի ղեկավարին: Ըստ ամենայնի՝ նա չի հարմարվում ներկայիս կարգավիճակին եւ ցանկանում է նորից գալ առաջին պլան: ՔՊ-ի ներսից մեզ փոխանցում են, որ Նիկոլ Փաշինյանն իր մերձավոր շրջապատին հասկացնել է տվել, որ չի ների նրանց, ովքեր Թորոսյանի հետ ջերմ հարաբերություններ են պահում ու փորձում են նրա լոբբինգն անել: Կարճ ասած՝ Փաշինյանի մոտ բարեխոսելու ու Արսեն Թորոսյանին նորից առաջ բերելու բոլոր ջանքերն ապարդյուն են անցնում, եւ նախաձեռնություններին ընթացք չի տրվում ոչ ուղիղ հրահանգավորմամբ: Ի դեպ, կառավարության որոշ շրջանակներ կարծում են, որ Արայիկ Հարությունյանի շուրջ բարձրացած նախկին աղմուկների հետեւում կարող է լինել հենց Արսեն Թորոսյանը: Մեզ փոխանցում են, որ ուժային կառույցներում կան թղթապանակներ՝ Թորոսյանի կողմից տարբեր տեղերում աշխատանքի տեղավորած անձանց վերաբերյալ եւս, ու դրանք հարմար պահի կօգտագործվեն: Արսեն Թորոսյանի գործադիր վերադառնալու նկրտումների մասին, իհարկե, փորձեցինք զրուցել հենց Արսեն Թորոսյանի հետ, սակայն նա, ինչպես միշտ, հեռախոսազանգերին չպատասխանեց:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը օրեր առաջ հանդիպում է ունեցել ոստիկանական համակարգի ներկայացուցիչների հետ ու հայտնել, որ իրենց կողքին է: Ավելին՝ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ վարչապետը այդ հանդիպման ժամանակ նաեւ անձամբ բանավոր հրահանգ է տվել ուժային կառույցների ղեկավարներին, որ որեւէ ոստիկանի որեւէ գործով չկալանավորեն: Նա բացատրել է, որ եթե կալանավորման գնան, ապա ոստիկանների ոգին կկոտրեն, սակայն պետք չէ ոստիկաններին թեւաթափ անել: Ահա, հենց այս հրահանգի հետեւանքով՝ մինչ օրս ապրիլից մեկնարկած շարժման անդամների նկատմամբ բռնության դեպքով որեւէ ոստիկանի պատասխանատվության չեն կանչել: ՀՀ քննչական կոմիտեից ArmLur.am-ին հայտնել են, որ. ««Տավուշը հանուն հայրենիքի» նախաձեռնության կողմից իրականացված հավաքների, բողոքի ակցիաների ընթացքում առերեւույթ հանցավոր արարքների առնչությամբ նախաձեռնված քրեական վարույթներով հանրային քրեական հետապնդում է հարուցվել ընդհանուր 59 անձի նկատմամբ: Մեղադրյալներից 29-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը, 13-ի նկատմամբ՝ տնային կալանքը, 15-ի նկատմաբ՝ բացակայելու արգելքը, 1-ի նկատմամբ՝ դաստիարակչական հսկողությունը, 1-ի նկատմամբ՝ վարչական հսկողությունը: 7 քրեական վարույթ՝ 17 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է դատարան». բայց որեւէ ոստիկան անգամ ձեւականորեն չի պատժվում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ գաղտնալսված դատախազ Ապրես Գրիգորյանը, որին գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը գաղտնալսումից հետո աշխատանքից հեռացրեց, դատարանում հաղթել է Աննա Վարդապետյանին: Այս տարվա՝ 2024 թվականի մայիսի 24-ին Վճռաբեկ դատարանը բավարարել է Ապրես Գրիգորյանի Վճռաբեկ բողոքը: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ պետք է վերացվի ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ 11.10.2023 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը, եւ կայացվի նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 17.08.2023 թվականի որոշումը եւ Ապրես Գրիգորյանի միջնորդությունը բավարարել՝ կասեցնել ՀՀ գլխավոր դատախազի 13.07.2023 թվականի «Կոտայքի մարզի դատախազության դատախազ Ապրես Գրիգորյանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին» որոշման եւ 14.07.2023 թվականի «Կոտայքի մարզի դատախազության դատախազ Ապրես Գրիգորյանին պաշտոնից ազատելու մասին» թիվ 313-Ա հրամանի կատարումը: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է եւ բողոքարկման ենթակա չէ»: Այսպիսով՝ գլխավոր դատախազը ստիպված է կատարել դատարանի վճիռը եւ գաղտնալսված դատախազին հետ ընդունել աշխատանքի: Հիշեցնենք, որ Կոտայքի մարզի դատախազության՝ արդեն նախկին դատախազ Ապրես Գրիգորյանի եւ մեկ այլ դատախազի աշխատասենյակում ամիսներ առաջ ԱԱԾ-ն խուզարկություն էր իրականացրել, նրանց ձերբակալել, ապա բաց էր թողել: Մամուլը գրեց, որ Գրիգորյանը դատախազ Աննա Վարդապետյանին հայտնել է ԱԱԾ-ում իրեն խոշտանգելու մասին, իսկ Վարդապետյանը խոշտանգման մասին դատախազի հաղորդումն ուղարկել է ԱԱԾ, այսինքն՝ այն նույն մարմին, որտեղ, ըստ Գրիգորյանի, իրեն խոշտանգել են: Արդյունքում՝ գաղտնալսված ու խոշտանգված դատախազներին ազատեցին պաշտոնից, իսկ ահա Կոտայքի մարզի դատախազ Պետրոս Պետրոսյանը ազատվեց պաշտոնից այն բանի համար, որ փորձել էր հետամուտ լինել, որ դատախազին խոշտանգողները պատժվեն: Դատախազին աշխատասենյակում խոշտանգելն անպատիժ թողնելու պատմությունն էլ դարձել էր Պետրոս Պետրոսյանի ու գլխավոր դատախազի տեղակալ Գեւորգ Բաղդասարյանի հրաժարականի պատճառը:



Իշխանականները որոշել են «պատժել» ընդդիմադիր պատգամավորներին եւ նրանց այլեւս պատվիրակությունների կազմում չեն ընդգրկում: Խորհրդարանը դարձել է ՔՊ-ի որջը: Ինչպե՞ս, բացատրենք. այս օրերին ԱԺ հերթական պատվիրակությունն է գործուղվել Գերմանիա, որի կազմում բացառապես ՔՊ-ական պատգամավորներն են: Պաշտոնապես հայտնել են ԱԺ-ից, թե Գերմանիա են մեկնել հայ-գերմանական խորհրդարանական բարեկամական խմբի անդամները, եւ տպավորություն է, թե ամեն ինչ օրինական է: ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, պատգամավորներ Ռուստամ Բաքոյանը, Բաբկեն Թունյանը, Միքայել Թումասյանը, Հռիփսիմե Հունանյանը գնացել են առավել բարեկամանալու գերմանական բունդեսթագի ներկայացուցիչների հետ: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից պարզեց, որ Հայաստան-Գերմանիա բարեկամական խմբում 30 հոգի է ընդգրկված, այդ թվում՝ ընդդիմադիր պատգամավորներ, սակայն Գերմանիա մեկնել են բացառապես իշխանականները:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉ ԸՆԹԱՑՔ Է ՍՊԱՍՈՒՄ ՇԱՐԺՄԱՆԸ

ArmLur.am-ի տաղավար հյուրընկալվել է «Ազգային ժողովրդավարական բեւեռ» շարժման անդամ Արա Պապյանը:

Արա Պապյանի հետ քննարկել ենք «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջիկա քայլերը՝ հասկանալու համար՝ ի՞նչ դերակատարում է ունեցել ԱԺԲ-ն:

-Պարոն Պապյան, ինչպես գիտենք՝ «Ազգային ժողովրդավարական բեւեռը» նույնպես մասնակցում է Բագրատ սրբազանի գլխավորությամբ տեղի ունեցող «Տավուշը հանուն հայրենիքի» շարժմանը, այս շարժումից ի՞նչ սպասելիքներ ունեք, քանի որ շատերի պնդմամբ շարժումը մարում է:

-Շարժումը չի մարում, պարզապես թեւակոխել է մեկ այլ փուլ, որը բնական է եւ շատ հաճախ է պատահում քաղաքական պայքարի մեջ: Պիտի ասենք՝ առաջին փուլը համաժողովրդային- հրապարակային պայքար էր, որը կարեւոր էր, որը սկսվեց բնական եղանակով, այսինքն՝ տեղի համայնքները դեմ դուրս եկան անօրինական սահմանազատմանը, հետո դա տեղափոխվեց Երեւան, որովհետեւ խնդիրը համապետական է, եւ պահանջն էլ համապետական դրվեց՝ ներկա վարչապետի եւ վարչախմբի հրաժարական: Դա իր զարգացումն ունեցավ, հիմա շարժումը թեւակոխում է Երեւանից այլ մարզերում տարածվելու, ինչպես նաեւ այս շարժման մասին իրականությունը տարբեր միջազգային կազմակերպություններին եւ տարբեր երկրներին հասցնելու, եւ ներկա վարչախմբի մասին իրականությունն ասելու փուլ, որովհետեւ ներկա վարչախումբը տարիներ շարունակ, ըստ էության, շահարկում է այն կեղծ թեզը, որ իբր ինքը ժողովրդավարական է, իբր ընտրված է, եւ եթե հեռանա, ապա գալու են մութ ուժեր, որոնց կոչում է «նախկիններ», եւ այդ ուժերը, իբրեւ թե, Եվրոպական, Արեւմտյան ուղղությանը դեմ են եւ այլն: Մենք այդպես չենք կարծում, որովհետեւ ներկա վարչախումբը ինքնին կեղծ ժողովրդավարական է, եւ այն բռնաճնշումները, որոնց ենթարկվել ենք, դրա ապացույցն են. կեղծ արեւմտամետ է որովհետեւ գործնական որեւէ քայլ դեպի Արեւմուտք երբեք չի արել, ավելի շատ խոսքեր են, քան գործողություններ, եւ կեղծ ու անբարոյական է երկրի ներքին օրենսդրության եւ միջազգային իրավունքի առումով:

-Անդրադառնանք նաեւ այն թեմային, որ Սրբազան հայրը կիրակի օրն ասաց, որ այս ուրբաթ օրվանից՝ հունիսի 28-ից, այցելելու են Հայաստանի տարբեր մարզեր, Դուք եւս պատրա՞ստ եք սրբազանի հետ շրջելու մարզերով:

-Այո՛, որովհետեւ պայքարի այդ ձեւը մենք որդեգրած ենք եղել տարիներ ի վեր, մշտապես այցելություններ ենք կատարել տարբեր մարզեր, եւ պիտի ասեմ, որ մեր նկատմամբ շատ ավելի խիստ եւ ոչ բարյացակամ են եղել: Մեր վերջին այցը, օրինակ, Վանաձորում էր, փորձում էինք դահլիճ վարձել, կլիներ հանդիսությունների, կամ անգամ սգո սրահ, էական չէր, սակայն մեզ ոչ մի տեղ վարձու սրահ չտրամադրեցին, ովքեր էլ համաձայնում էին հետո տարբեր պատճառաբանություններով մերժում էին. մենք գիտեինք, որ արգելում են նրանց: Հետեւաբար՝ պայքարի այդ ձեւը մեզ համար ընդունելի է, մենք մասնակցելու ենք եւ երեւի 2-3 մեքենայով կուղեկցենք Սրբազանին եւ աջակիցներին Երեւանից, բայց տեղերում, որ մարզ որ գնալու կլինենք, այնտեղ մեր համախոհների խմբերը եւս կմիանան, քանի որ մենք ունենք ընդհանուր նպատակ՝ այս իշխանությունների հեռացում, անցումային փուլ, ապա ազատ, անաչառ ընտրությունների կազմակերպում:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԿՈՆԳՐԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՉԸ

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի անդամ Ադամ Շիֆը պետքարտուղար Էնթոնի Բլինքենին ուղղված նամակում, որին միացել են եւս 47 օրենսդիրներ, հորդորում է առաջնահերթություն տալ Արցախում վտանգված հայկական մշակութային ժառանգության պաշտպանության խնդրին:

Հունիսի 24-ի նամակում կոնգրեսական Շիֆը եւ նրա գործընկերները գրում են. «2023թ. սեպտեմբերին Արցախի դեմ Ադրբեջանի ռազմական հարձակումից հետո, արդեն իսկ կան ապացույցներ, որ Ադրբեջանը շարունակում է հայկական մշակույթը ջնջելու իր ռազմավարությունը նաեւ այս տարածաշրջանում եւ դրա շուրջը»: Օրենսդիրները ընդգծել են. «Մենք գրում ենք այս նամակը՝ արտահայտելու մեր խոր մտահոգությունը. պետքարտուղարությունը պետք է ավելին անի՝ կանխելու Ադրբեջանի գործողությունները: Նույնիսկ այն ժամանակ, երբ ձեր բարձրաստիճան դիվանագետները հանդիպում են ադրբեջանցի պաշտոնյաների հետ, անհասկանալի է՝ արդյոք այդ մտահոգությունները բարձրացվո՞ւմ են, եւ եթե բարձրացվում են, ապա դա արվում է համապատասխան լրջությա՞մբ, ինչին արժանի է այս խնդիրը»:

Նամակում նախ մատնանշվում է 1997-2011թթ. Նախիջեւանում հայկական ժառանգության համակարգված ոչնչացման փաստը, ինչպես նաեւ Շուշի քաղաքի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու (նաեւ հայտնի է որպես Կանաչ ժամ), ինչպես նաեւ մշակութային ժառանգության այլ կոթողների ավերումը: Ընդգծվում է՝ Ադրբեջանը հաճախ փորձում է քողարկել հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը՝ այն անվանելով պատմական վայրերի «վերականգնում», ինչպես նաեւ ջնջելով հայկական ժառանգությունը՝ պնդելով, որ այդ հուշարձաններն ունեն «կովկասյան ալբանական» ծագում: Շուրջ 500 հայկական մշակութային ժառանգության հուշարձաններ վտանգի տակ են Ադրբեջանի կողմից Արցախի էթնիկ զտումներից հետո, այդ թվում՝ աշխարհի հնագույն եկեղեցիներն ու վանքերը, որոնք թվագրվում են 4-րդ դարին, ինչպես նաեւ բարդ փորագրությամբ խաչքարեր, որոնք ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից արձանագրված են «Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության» ցանկում:

Մեկնաբանելով հիշյալ նամակը՝ Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի Վաշինգտոնի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը նկատել է. «Չկա Ադրբեջանի ցեղասպանության մտադրության ավելի հստակ ապացույց, քան նրա համակարգված ջանքերը՝ ջնջելու հայկական քաղաքակրթության վերջին հետքն Արցախում, ճիշտ այնպես, ինչպես դա արեցին թուրքական իրարահաջորդ կառավարությունները Հայոց ցեղասպանությունից հետո: Մենք ողջունում ենք ներկայացուցիչ Շիֆի ջանքերը հայկական մշակութային ժառանգության պաշտպանությունն ապահովելու գործում եւ գնահատում նրա շարունակական ջանքերը՝ մարդկության դեմ կատարած հանցագործությունների համար Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու գործում»:

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ԳԵՐԻՆԵՐԻ ԽՆԴՐԻՆ

ԵԽԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության անդամ Արմեն Գեւորգյանը դիմել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների բարձր հանձնակատար Վոլկեր Տյուրկին, նշել՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ արդար եւ փոխընդունելի կարգավորման հիմնական խոչընդոտներից մեկը Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ գերիների եւ ռազմագերիների, այդ թվում՝ ԼՂ ղեկավարների վերադարձի հարցն է:

Արմեն Գեւորգյանը հետաքրքրվել է՝ ինչ մոտեցում ունի ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնակատարն այս խնդրի առնչությամբ:

«Ակնհայտ է, որ անցած տարի բոլորիս մտահոգել էր Լեռնային Ղարաբաղի տարածքից հայերի վտարումը: Մենք մի շարք առաքելություններ ենք նախաձեռնել մասնավորապես Հայաստանում՝ ավելի շատ տեղեկություն ստանալու նրանց հետ կատարվածի մասին: Մենք երկխոսում ենք ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի հետ՝ լուծումներ գտնելու համար: Իհարկե, կա վերադարձի իրավունք, կա գույքը հարգելու եւ պաշտպանելու իրավունք: Իսկապես կարեւոր է, որ խաղաղության գործընթացը շարունակական լինի», - նշել է Տյուրկը:

ՉՊԵՏՔ Է ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ԼԻՆԻ

Հայաստանի Սահմանադրության փոփոխությունը չպետք է նախապայման լինի Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության շրջանակային համաձայնագիր կնքելու համար, այս մասին ԱՄՆ Ատլանտյան խորհրդում այսօր տեղի ունեցած «Արդյո՞ք Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության եզրին են» թեմայով քննարկմանն ասաց ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահ Ջեյմս Ուորլիքը:

«Ապագայում ինչ-որ պահի, այո՛, Սահմանադրությունն անհրաժեշտ կլինի փոխել, սակայն կարծում եմ՝ բոլորը գիտեն, որ Հայաստանում դա անելը հեշտ չէ: Նման պայմանը կխոչընդոտի համաձայնագիր կնքելուն: Եթե շրջանակային համաձայնագիրը հիմնվում է այն գաղափարի վրա, որ Սահմանադրությունն անհրաժեշտ է փոխել, ապա դա տեղի չի ունենա բազմաթիվ պատճառներով», - ասա նա:

Նախկին դեսպանի խոսքով՝ Հայաստանի Սահմանադրության փոփոխության հարցին կարող է անդրադարձ արվել համաձայնագրում, որտեղ կարող է նշվել, որ կա Սահմանադրությունը փոխելու մտադրություն, որ Սահմանադրության փոփոխությունը կարող է տեղի ունենալ ապագայում:

«Սակայն այն փոխելու գաղափարը իրատեսական չէ», - հավելեց ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահ Ջեյմս Ուորլիքը:

ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՉԻ ԿԱՊՈՒՄ ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ

Հայաստան-Ադրբեջան եւ Հայաստան-Թուրքիա գործընթացները ՀՀ-ն դիտարկում է որպես միմյանցից առանձին ու տարբեր ուղղություններ: Այս մասին «ԱՊՐԻ ֆորում 2024»-ի ընթացքում ասել է Հայաստանի ԱԽՔ Արմեն Գրիգորյանը՝ անդրադառնալով ինչող տեսակետին, թե Թուրքիան չի կարգավորի Հայաստանի հետ հարաբերությունները, քանի դեռ Հայաստանն ու Ադրբեջանը համաձայնության չեն եկել:

«Մենք երկու գործընթացները տեսնում ենք տարբեր ուղիներով: Կան Հայաստան-Ադրբեջան հարաբերություններ եւ Հայաստան-Թուրքիա հարաբերություններ: Մեր մոտեցումը հետեւյալն է՝ եթե լուծելու երկու բարդ բանաձեւեր կան, ու դուք այդ բարդ բանաձեւերը միացնում եք, ապա լուծումն ավելի դժվար կլինի: Այսպիսով՝ դրանք պետք է բաժանել», - ասել է Գրիգորյանը:

Գրիգորյանը նշել է՝ Հայաստանն ակնկալում է, որ դիվանագիտական անձնագրեր ունեցողների եւ երրորդ երկրների քաղաքացիների համար ցամաքային սահմանը բացելու վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունը կյանքի կկոչվեն: Նա նկատել է, որ Հայաստանը Թուրքիայից սպասում է գործողությունների՝ առաջ շարժվելու համար: Ախ քարտուղարի խոսքով՝ այս գործընթացում ժամկետ սահմանված չէ:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

«Հայաստանը Ադրբեջանից ստացել է խաղաղության պայմանագրի առաջարկների 10 փաթեթ», - այս մասին լրագրողների հետ զրույցում հայտնել է Արմեն Գրիգորյանը:

Նա նշել է, որ գործընթացը դինամիկ է: Գրիգորյանի խոսքով՝ երբեմն առաջընթաց կա, երբեմն՝ ոչ «Մենք քրտնաջան աշխատում ենք», - նշել է նա :

Գրիգորյանը խոսել է նաեւ Արցախի հանձնման մասին՝ մասնավորապես ասելով. «Ռուսաստանը եկել է, հանձնել է Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանին ու վերադարձել Ռուսաստան», - հայտարարել է ՀՀ ԱԽՔ Արմեն Գրիգորյանը:

«Երբ Հայաստանն ամբողջությամբ կախված էր Ռուսաստանից, պատերազմ չե՞նք ունեցել՝ ունեցել ենք: Եկեք արձանագրենք, որ մինչեւ այս գոյություն ունեցող իրավիճակի պատճառով ենք մենք հայտնվել պատերազմում, մենք փորձել ենք այս փոփոխություններով կայունություն բերել ու համոզված ենք, որ այս փոփոխությունները կայունություն են բերելու», - նշեց նա՝ խոսելով արտաքին քաղաքական վեկտորի փոփոխության մասին:

Արմեն Գրիգորյանի հայտարարությանն ի պատասխան՝ Դաշնային խորհրդի միջազգային հարցերով կոմիտեի ղեկավար Գրիգորի Կարասինը ասել է. «Դա բացարձակապես չի համապատասխանում իրականությանը: Կարող ենք տեսնել հայ քաղաքական գործիչների, այդ թվում՝ բարձրագույն ղեկավարության գրառումներն ու ելույթները: Դրանց մեջ կա այդ հարցերի պատասխանները: Այդ գրառումները հայտնի են, թող կարդա»:

ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ

ՊՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ՀՀ ՊՆ փոխնախարար Արման Սարգսյանը պաշտոնի է նշանակվել 2021 թվականի հունվար ամսին: Մինչ պաշտպանության նախարարություն գալը՝ Սարգսյանը 2019-ից մինչեւ 2020 թվականները եղել է ՀՀ ոստիկանապետը:

Արման Սարգսյանը 2018 թվականին ձեռք է բերել 1 բնակարան, 1 ավտոտնակ եւ հողին ամրակցված այլ կառույց, որը, ըստ 2023 թվականի հաշվետու տարվա եկամուտների, գույքի, ծախսերի եւ շահերի հայտարարագրի, նկուղ է:

Անշարժ գույքերը գտնվում են մայրաքաղաք Երեւանի Նորք-Մարաշ վարչական շրջանում:

Այժմ ՀՀ ՊՆ փոխնախարար բնակարան ձեռք բերելու ընթացքում Հայաստանի Հանրապետության նախագահի 2018 թվականի մայիսի 18-ի հրամանագրով նշանակվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի առաջին տեղակալ:

Տվյալ տարվա սկզբում առկա որպես առկա տրանսպորտային միջոց 2021 թվականին գնել է 2013 թվականի արտադրության Lexus մակնիշի մեքենա, որի արժեքը կազմել է 13 մլն 500 հազար դրամ:

Փոխնախարարի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 108 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 15 հազար ԱՄՆ դոլար եւ 7 մլն 500 հազար դրամ:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 18 մլն 405 հազար դրամ, որից 14 մլն 578 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ պաշտպանության նախարարությունից, իսկ 3 մլն 694 հազար դրամը զինվորական կենսաթոշակ է Միասնական սոցիալական ծառայությունից: Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանից որպես աշխատանքի վարձատրություն փոխնախարար Սարգսյանը ստացել է 132 հազար դրամ

Պաշտպանական եւ անվտանգային ոլորտի հարցերին ոչ միշտ պատասխանող փոխնախարար Սարգսյանի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 14 մլն 280 հազար դրամ, որից 9 մլն 614 հազար դրամը բնակարանի, ավտոկայանատեղիի եւ նկուղի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է:

Օրերս խորհրդարանում լրագրողները պաշտպանության փոխնախարար Արման Սարգսյանից հետաքրքրվեցին, թե Տավուշի մարզում տեղադրված փշալարերը որքանո՞վ են պաշտպանում անվտանգությունը, սակայն հարցին պատասխանելու փոխարեն՝ Արման Սարգսյանն ասաց, որ կրկնելու է նույն նախադասությունը, որը լրագրողների համար լինելու է կրկնություն, ինչը գուցե ժպիտ առաջացնի:

«Պաշտպանության նախարարությունը, ինչը վերաբերում է ծառայությանն ու ՊՆ-ին, շատ օպերատիվ արձագանքում են, յուրաքանչյուր տեղեկություն տրամադրվում է: Եթե նախկինում ինչ-որ չափով դժգոհություն կար արագության հետ կապված, վերջին ժամանակներում այդ խնդիրը, կարծես թե, չկա:

Ես չեմ ցանկանա պատասխանել հարցերի, որոնց անընդհատ պատասխանում ենք», - նշեց Արման Սարգսյանը:

Ըստ նրա՝ պաշտպանության նախարարությունը համարժեք արձագանքում է Ադրբեջանի կողմից տարածվող տեղեկությունների, ըստ որի՝ իբրեւ հայկական կողմից տեղի է ունենում սահմանային իրավիճակի լարում:

Լրագրողի դիտարկմանը, որ հակառակորդն ակտիվացել է, զինծառայողների ծնողներն անհանգստանում են, Արման Սարգսյանը նկատեց. «Դուք ի՞նչ գիտեք, որ հակառակորդն ակտիվացել է, տեղեկատվական իրականությունը անհամապատասխան տվյալներ է անընդհատ տարածում, որի վերաբերյալ ՊՆ-ն հանդես է գալիս հայտարարություններով:

Եթե որեւէ խնդիր է ծագում, մենք անընդհատ տեղեկատվություն ենք տրամադրում դրա առնչությամբ, ընդ որում՝ տրամադրում ենք ստուգված տեղեկատվություն, որպեսզի որեւէ խնդիր չծագի:

ՊՆ-ին վերաբերող բոլոր հարցերի՝ թե՛ սահմանային իրավիճակի, թե՛ անկայուն ու կայուն վիճակի վերաբերյալ, մեր լրատվականը տրամադրում է տեղեկատվություն», - եզրափակեց Արման Սարգսյանը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԸ ԿԱՐԵՎՈՐ Է

Հնդկաստանի համար Հայաստանի դիրքը շատ կարեւոր է, որովհետեւ այն գտնվում է Եվրոպայի եւ Արեւելքի միջեւ, հետեւաբար երկու երկրների միջեւ հաստատվել են լավ հարաբերություններ:

Նման դիրքորոշում է հայտնել Հնդկաստանի արտաքին գործերի նախարար Սուբրահմանյամ Ջայշանկարը Եվրասիական գոտու երկրներից Հնդկաստան ժամանած լրագրողների խմբի հետ հանդիպման ժամանակ:

«Կան շատ հնարավորություններ՝ զարգացնելու փոխշահավետ կապերը մի շարք բնագավառներում՝ տնտեսական, մշակութային, քաղաքական եւ այլն: Այնպես որ այստեղ շատ անելիքներ կան»,- ասել է Ջայշանկարը՝ խոսելով հայ-հնդկական հարաբերությունների մասին:

Հնդկաստանի արտգործնախարարն անդրադարձել է նաեւ վերջին շրջանում շատ երկրների կողմից քննարկման թեմա դարձած լոգիստիկ մեգա ծրագրերի իրականացման խնդրին:

«Վերջին տասնամյակներին տեղի են ունեցել մեծաթիվ փոփոխություններ, ինչի արդյունքում ընձեռնվել են նոր տրանսպորտային եւ լոգիստիկ միջանցքներ բացելու հնարավորություններ: Շատ է խոսվում Հյուսիս-Հարավ տրանսպորտային ուղու մասին, որի առանցքում շատ պետությունների համար կարեւոր դերակատարում ունի Չաբահարի նավահանգիստը: Որպես այլընտրանքային ճանապարհ է դիտարկվում նաեւ միջինասիական միջանցքը: Կլինեն նաեւ այլընտրանքային ուրիշ տարբերակներ, որովհետեւ նախկին բոլոր միջանցքները հիմնադրվել են ութ-ինը տասնամյակ առաջ եւ դրանց ռեսուրսներն ու հնարավորությունները մաշվել են», - ասել է Հնդկաստանի արտաքին գործերի նախարարը:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանը զենք-զինամթերք է ձեռք բերում միայն իր տարածքային ամբողջականությունը պաշտպանելու համար: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը:

«Մինչեւ այս պահը ձեռք բերված բոլոր զենքերն օգտագործվելու են միայն ՀՀ ինքնիշխան տարածքը պաշտպանելու համար», - ասաց նա:

Ախ քարտուղարի խոսքով՝ տարածաշրջանի խաղաղության համար պատասխանատու են բոլորը, առաջին հերթին՝ տարածաշրջանային երկրները, բայց նաեւ միջազգային գործընկերները:

Անդրադառնալով Ադրբեջանի կողմից տարածվող ապատեղեկատվությանը՝ Գրիգորյանը նշեց. «Բնականաբար, Հայաստանին անհանգստացնում են նման հաղորդագրությունները, որովհետեւ միանշանակ է, որ հայկական կողմից էսկալացիայի որեւէ քայլ չի եղել, կրակոցներ չեն եղել, մեզ անհանգստանցում է, որ նման կեղծ լուրեր են տարածում, բայց նաեւ խնդրին լուծում տալու նպատակով մենք Ադրբեջանին առաջարկել ենք, որպեսզի համատեղ հետաքննման մեխանիզմ ստեղծենք՝ դա կարող է լինել քննչական կամ այլ մարմիններ», - ասաց նա:

Գրիգորյանի խոսքով՝ Ադրբեջանը դեռեւս Հայաստանի այս առաջարկին չի արձագանքել:

«Եթե Ադրբեջանը պնդումներ է կատարում, որ այդպիսի դեպքեր են եղել, բնականաբար, Հայաստանն ասում է, որ նման բան չի եղել, մենք վստահ ենք, որ չի եղել, եթե Ադրբեջանը հետաքրքրված է իրականությունով, ապա, կարծում եմ, որ առաջարկը լավ հնարավորություն է»,- նշեց նա:

ԲԱՆՏ ԵՎ ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔ

ԻՆՉ ԻՐԱՎԻՃԱԿ Է ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՈՎ

2024 թվականի ապրիլից մեկնարկած «Տավուշը հանուն Հայրենիքի» բաղաքացիական շարժման անդամների նկատմամբ քրեական հետապնդումները շարունակվում են: Տավուշում տեղի ունեցած բախումների, հունիսի 12-ին Քաղրամյան պողոտայում եւ արտաքին գործերի նախարարության շենքի մոտ տեղ ունեցած դեպքերի հետեւանքով մի խումբ քաղաքացիներ են հայտնվել իրավապահների տեսադաշտում եւ, ինչպես նկատում ենք, նախաքննական մարմինը պարբերաբար հայտարարություններ է տարածում շարժման մասնակիցների նկատմամբ քրեական վարույթներով:

Արդյունքում՝ «Ժողովուրդ» օրաթերթը դիմել է ՀՀ քննչական կոմիտե հասկանալու համար, թե «Տավուշը հանուն հայրենիքի» նախաձեռնության կողմից իրականացված հավաքների, բողոքի ակցիաների ընթացքում այս պահի դրությամբ քանի անձի նկատմամբ է հարուցվել քրեական վարույթ եւ նրանցից քանիսն են կալանավորված:

Ի պատասխան մեր հարցման՝ ՀՀ քննչական կոմիտեից հայտնեցին. «Տավուշը հանուն հայրենիքի» նախաձեռնության կողմից իրականացված հավաքների, բողոքի ակցիաների ընթացքում առերեւույթ հանցավոր արարքների առնչությամբ նախաձեռնված քրեական վարույթներով հանրային քրեական հետապնդում է հարուցվել ընդհանուր 59 անձի նկատմամբ: Մեղադրյալներից 29-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը, 13-ի նկատմամբ՝ տնային կալանքը, 15-ի նկատմամբ՝ բացակայելու արգելքը, 1-ի նկատմամբ՝ դաստիարակչական հսկողությունը, 1-ի նկատմամբ՝ վարչական հսկողությունը: 7 քրեական վարույթ՝ 17 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Ավելի վաղ ՀՀ քննչական կոմիտեն հայտարարություն էր տարածել, որում մասնավորապես ասվում էր. «Ինչպես արդեն տեղեկացրել ենք, 2024թ. հունիսի 12-ին՝ ժամը 19:30-ի սահմաններում, ակցիայի մի խումբ մասնակիցներ, չենթարկվելով տեղում հասարակական կարգի պահպանությունն ու շրջակա հատուկ պահպանության ենթակա օբյեկտների անվտանգությունն ապահովող ոստիկանության ծառայողների օրինական կարգադրություններին, խմբով ճնշում գործադրելով ոստիկանների նկատմամբ, փորձել էին ճեղքել վերջիններիս կողմից կազմված պատնեշը՝ այդ ընթացքում շշեր, տարբեր առարկաներ նետելով ոստիկանական շարքերի ուղղությամբ:

Հետագա նման գործողությունները կանխելու նպատակով ՀՀ ոստիկանության կողմից, նախապես զգուշացվելուց հետո, կիրառվել էին հատուկ միջոցներ... ...Հիշյալ մեղադրյալներից 8-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը, 5-ի նկատմամբ՝ տնային կալանքը, 2-ի նկատմամբ կիրառվել է բացակայելու արգելք, իսկ 1-ի նկատմամբ՝ վարչական հսկողություն:

Հունիսի 12-ին Երեւան քաղաքի Բաղրամյան եւ Դեմիրճյան փողոցների խաչմերուկում տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում հասարակական կարգի պաշտպանության եւ հատուկ պահպանվող տարածքների պահպանության պարտականություններ կատարող ոստիկանության ծառայողների գործողությունների համաչափության եւ իրավաչափության առնչությամբ ՀՀ քննչական կոմիտեում նախաձեռնվել է առանձին քրեական վարույթ: Ձեւավորվել է քննչական խումբ: Նախաքննության շրջանակներում մի շարք անձինք, այդ թվում՝ նաեւ 8 լրագրողներ ճանաչվել են տուժող, գործընթացը շարունակական է:

Վերոնշյալ երկու վարույթներով էլ նախաքննությունը շարունակվում է»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏ

Լ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՍԿԵՍՐԱՅՐԻՆ ԿԱՆՉԵԼ ԵՆ ԿՈՄԻՏԵ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Քննչական կոմիտե է հրավիրվել հաղորդավարուհի Լուսինե Թովմասյանի սկեսրայրը՝ Աշոտ Հովհաննիսյանը եւ հայտնել, որ գործով հայտարարվեց նախաքննության ավարտ:

«ՀՀ Քննչական կոմիտեն էկոնոմիկայի արդեն նախկին նախարար Վահան Քերոբյանի դեմ հարուցված քրեական գործով ավարտական փուլի մեջ է գտնվում, եւ դատելով իրավիճակից՝ առաջիկայում գործով նախաքննության ավարտ կհայտարարվի»:

Հիշեցնենք, որ էկոնոմիկայի արդեն նախկին նախարար Վահան Քերոբյանին «Սիներջիի» վերաբերյալ քրեական գործով մեղադրանք է առաջադրվել, եւ նա գտնվում է տնային կալանքի տակ փետրվարի 16-ից, սակայն վերջերս ազատ արձակվեց:

Իսկ ինչ էր պարզել նախաքննական մարմինը: Բանն այն է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար ծառայության ձեռքբերման մրցույթի ընթացքում կատարված առերեւույթ չարաշահումների վերաբերյալ քրեական վարույթով, քրեական հետապնդում է հարուցվել 8 անձի նկատմամբ:

Մասնավորապես՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մի շարք պաշտոնատար անձինք, իրենց ղեկավար պաշտոնատար անձի հանձնարարությամբ, մրցույթի ընթացքում հանդիպումներ ու հեռախոսազրույցներ են ունեցել «Ս» ընկերության ներկայացուցիչների հետ, նրանց հետ քննարկել մրցույթի պայմանները, ընդհուպ՝ նրանց տրամադրել մրցակից «Հ» հիմնադրամի կողմից հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը եւ նրանց օժանդակությամբ՝ մրցույթի ընթացքում սահմանել այնպիսի նոր կամ փոփոխված պայմաններ, որոնց հիմնադրամի ներկայացրած փաստաթղթերը կարող են դիտվել չհամապատասխանող՝ հնարավորություն տալով ընկերությանը հեռացնել մրցույթից: Սույն քրեական գործով մեղադրյալ էր նաեւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կինը՝ Անի Գեւորգյանը, որի մասով քրեական գործը կարճվեց գործում զղջալու հիմքով: Նշենք որ գործով մեղադրյալ է նաեւ «Սիներջի» ընկերության ղեկավար Աշոտ Հովհաննիսյանը, որը հաղորդավարուհի Լուսինե Թովմասյանի սկեսրայրն է:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՎՃԻՌԸ ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ

Գրել էինք, որ ՔՊ-ական, «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ տնօրեն Դավիթ Մարգարյան ՀՈԱԿ-ում տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար կեղծ փաստաթղթեր էր ներկայացրել: Արդյունքում՝ նախաքննական մարմինը ՔՊ անդամ Դավիթ Մարգարյանին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ նա օգտագործել է փաստաթուղթ կազմելու, տալու կամ դրա իսկությունը հավաստելու իրավասություն ունեցող կազմկերպության կողմից տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող, իրավունք վերապահող եւ պատասխանատվությունից ազատող կեղծ փաստաթղթեր:

Արդյունքում դատարանը Դավիթ Մարգարյանին մեղավոր էր ճանաչել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին նախատեսված հանցանքի կատարման մեջ եւ որպես պատիժ նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

Դավիթ Մարգարյանից հօգուտ ՀՀ-ի պետական բյուջեի բռնագանձել փորձաքննության արժեք կազմող 738.000 (յոթ հարյուր երեսունութ հազար) ՀՀ դրամը՝ որպես վարույթային ծախս:

Դավիթ Մարգարյանի դեմ հաղորդում է ներկայացրել ՔՊ սրտի իրավապաշտպան ՆԵՐՍԵՍ Խաչատրյանը:

ԽՈՒՍԱՓԵԼ ԵՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ

2024 թվականի ամառային զորակոչը մեկնարկել է, իսկ ահա իրավապահ համակարգը մեկը մյուսի հետեւից քրեական պատասխանատվության է ենթարկում 2023 թվականի ամառային զորակոչից հրաժարված ժամկետային զինծառայողներին:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Էրիկ Ավետյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա ճանաչվել է սահանափակումով պիտանի՝ զինվորական ծառայության համար, որից հետո ստացել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեկնելու ծանուցագիրը, սակայն ծանուցագրում նշված օրը՝ 30.07.2023 թվականին չի ներկայացել ՀՀ ՊՆ ստորաբաժանում եւ խուսափել է հայտարարված 2023 թվականի ամառային հերթական պարտադիր զինվորական ծառայության զորակոչից:

Աբրահամ Զաքարյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա 30.05.2023 թվականին ՀՀ ՊՆ Ջ եւ ՋՀԾ Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում կանգնել է զինվորական հաշվառման, պիտանի ճանաչվել զինվորական ծառայության համար եւ ենթակա է եղել պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ամառային զորակոչին, որին ներկայացել է, ուղեգրվել բուժհաստատություններ, սակայն չի ներկայացել բուժհաստատություններ եւ խուսափել է հայտարարված՝ 2023 թվականի ամառային հերթական պարտադիր զինվորական ծառայության զորակոչից:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 25-ից 26-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 116 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԹԱՔՑՆՈՒՄ Է ՎՆԱՍԻ ՉԱՓԸ

Մայիսի 26-ին վարարած Դեբեդը, Աղստեւը մեծ վնասներ են հասցրել Տավուշի մարզին: Այրում ՀԷԿ-ից մինչեւ Վրաստանին սահմանակից Դեբեդավան գյուղ ընկած տարածքում վարարած Դեբեդից տուժել է մոտ 400 հեկտար հող, մեծ մասամբ՝ պտղատու այգիներ, շարքից դուրս են եկել 3 ավտոմոբիլային, մեկ հետիոտնի կամուրջներ, ոռոգման պոմպակայաններ, ջրագծեր: Նոյեմբերյան համայնքի՝ Դեբեդի հովտի բնակավայրերում ջրհեղեղից վնասված 40 շենք-շինություններից 12-ը բնակարաններ են, որոնք ամբողջությամբ լցվել էին ջրով: Արճիս գյուղի վարչական ղեկավար Սոս Միկիչյանը հայտնեց,որ Արճիսը Դեբեդի ափին 52 հեկտար տարածք ունի,որը «Ճալա» է կոչվում: Այդտեղ ելակի ցանքեր էին,տարատեսակ մրգատու այգիներ, նաեւ գյուղատնտեսական ցանքեր: Վարչական ղեկավարն ասաց, որ վարարած Դեբեդն այդ տարածքն ամբողջությամբ լցրել է տիղմով, քարերով, տարբեր առարկաներով, ավերել է ճանապարհներ,ջրահավաք պատնեշներ, ոռոգման ջրագծեր, թեեւ որոշ ծառեր կանգուն են մնացել, դրանք այլեւս պիտանի չեն: Այգիները վերականգնելու համար այգեգործները հսկայական ծախսեր պետք է կատարեն: Ջրհեղեղի պատճառած վնասները գնահատել են համայնքի եւ մարզային հանձնաժողովները, բնական տարերքից տուժած գյուղացիները այդ առթիվ ձեւաթղթեր են լրացրել, նաեւ լուսանկարներ ներկայացրել իրենց կրած վնասների մասին: Սոս Միկիչյանը հայտնեց, որ ջրհեղեղի պատճառած վնասներին տեղում ծանոթացել են ՄԱԿ-ի աշխատակիցները: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել՝ նրան հարցնելով. «Մայիսի 26-ի ջրհեղեղից որքան նյութական վնաս է պատճառվել Տավուշի մարզին, դրանցից որքանը՝ մասնավոր սեկտորին, որքանը՝համայնքներին, որքանը՝ պետական հատվածին»: Մարզպետարանից պատասխանել են. «Մայիսի 26-ի ջրհեղեղի նյութական վնասները գույքագրված են, բայց արձանագրված չեն մասնավորի, համայնքի եւ պետական հատվածների վնասների չափը»: Կարծում ենք, որ մարզպետը միտումնավոր թաքցրել է ջրհեղեղի պատճառած վնասի չափերը, քանի որ դրանք մեծ են, իսկ տուժածներին պետության կողմից դրամական փոխհատուցում կամ աջակցություն դեռեւս չի ցուցաբերվել:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԴՐՈՇԸ՝ ԿԻՐԱՆՑՈՒՄ

Տավուշի մարզպետարանը հայտարարություն է տարածել ճանապարհաշինական աշխատանքներով պայմանավորված՝հունիսի 24-ին՝ժամը 14:00-ի սահմաններում, Կիրանց-Աճարկուտ ավտոճանապարհին կատարված պայթեցման աշխատանքների մասին՝հանրությանը հորդորելով չանհանգստանալ: Սահմանազատման անվան տակ Կիրանցի կամուրջը, Կիրանց գյուղից տներ, տարածքներ միակողմանի՝ ապօրինի կերպով Ադրբեջանին են հանձնել, Ադրբեջանի դրոշը Կիրանց գյուղի գլխին տնկվել է, գյուղի նորակառույց դպրոցի շենքը ադրբեջանցի սահմանապահ զինյալներից մոտ 50 մետր հեռավորությամբ է գտնվելու, Կիրանցի բնակիչները այդ ամենի՞ց, թե՞ պայթեցման աշխատանքներից պիտի անհանգստանային:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔ

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Մայիսի 25-ին, Երեւանում, Հայաստանի Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԱՏՁՄ) փոխըմբռնման հուշագիր ստորագրեց «Հայաստանի կիրառական քաղաքականության հետազոտական ինստիտուտ» հիմնադրամի (ԱՊՐԻ Արմենիա) հետ:

Հուշագիրը նշանավորում է երկու կազմակերպությունների համատեղ աշխատանքները 2024 թվականի նորարարության եւ տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրեսի (WCIT2024//DigiTec) կազմակերպման աշխատանքներին օժանդակումը, համատեղ իրականացումն ու ոլորտի քաղաքականության հետազոտության եւ երկխոսության գործում համատեղ ջանքերի ներդրումը:

Փոխըմբռնման հուշագիրը ստորագրեցին Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության գործադիր տնօրեն Սարգիս Կարապետյանը եւ Հայաստանի կիրառական քաղաքական հետազոտությունների ինստիտուտ հիմնադրամի տնօրեն Լարա Սեդրակյանը:

Հուշագրի շնորհիվ կմիավորվեն երկու կառույցների ջանքերը՝ ի նպաստ WCIT2024//DigiTec միջոցառման կազմակերպչական աշխատանքների, հեղինակավոր հյուրերի ներգրավման եւ այլ ուղղություններով, ինչպես նաեւ քաղաքականության ձեւավորման գործում լրացուցիչ փորձագիտական մտքի ու ներուժի ներգրավման:

«Շնորհակալ ենք ԱՊՐԻ Արմենիային այս համագործակցության համար: Փոխըմբռնման հուշագիրը նշանակալի քայլ է WCIT2024/DigiTec-ի հաջողության գործում: Ներդնելով մեր հսկայական փորձը, վստահ եմ, որ կկազմակերպենք ուշագրավ իրադարձություն, որը կզարգացնի տեխնոլոգիան եւ կնպաստի ոլորտի ընդլայնմանը Հայաստանում»,-ասաց WCIT2024//DigiTec-ի կազմկոմիտեի գործադիր տնօրեն Հայկ Կարապետյանը:

WCIT2024//DigiTec-ը տեղի կունենա 2024 թվականի հոկտեմբերի 4-7-ը Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում՝ «ՄՏՔԻ ՈՒԺԸ. Արհեստական Բանականությունը Սահմաններից այն կողմ՝ էթիկայի շրջանակներում» խորագրով:

«Մենք շատ ոգեւորված ենք մեր ուժերը միավորելու Հայաստանի Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության եւ WCIT2024/DigiTec-ի հետ: Այս համագործակցությունը ընդգծում է մեր հավատարմությունը ընդհանուր նպատակին եւ մեր պատրաստակամությունը միասին աշխատելու՝ Հայաստանում առաջատար տեխնոլոգիական ոլորտի քաղաքականության հետազոտության եւ երկխոսության զարգացման համար: Մեծ հաճույք է ԱՏՁՄ-ի հետ աշխատելը եւ նպաստելը WCIT2024/DigiTec-ի հաջողությանը», - ասաց Հայաստանի կիրառական քաղաքական հետազոտությունների ինստիտուտ հիմնադրամի տնօրեն Լարա Սեդրակյանը:

Չորս օր շարունակ WCIT2024//DigiTec-ը Հայաստանը կվերածի տեխնոլոգիական մտքի կենտրոնի՝ հարթակ դառնալով ոլորտի առաջատար համաշխարհային խոսնակների ելույթների, պանելային քննարկումների եւ B2B հանդիպումների համար: Համաժողովը կհյուրընկալի նաեւ մեծ ճանաչում ունեցող՝ ստարտափ ընկերությունների համար WITSA-ի համաշխարհային գավաթը (WITSA World Cup (WWC)), նորարարական ցուցադրություններ, բիզնես շնորհանդեսներ, սեմինարներ եւ այլն միջոցառումներ:

«Շուրջ 20 տարի է, ինչ ԱՏՁՄ-ը մեծ ջանքեր է գործադրում Հայաստանի տեխնոլոգիական էկոհամակարգի քաղաքականության մշակման գործում: Այժմ եկել է համատեղ գործելու պահը. ԱՊՐԻ Արմենիայի հետ այս համագործակցությունը եւ մեր ջանքերը WCIT2024/DigiTec-ի համար կհամախմբեն մեր ուժերը եւ ռեսուրսները՝ խթանելու տեխնոլոգիաների եւ ոլորտի ռազմավարական քաղաքականության կարեւոր առաջընթացը մեր երկրում»,-ասաց Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԱՏՁՄ) գործադիր տնօրեն, Սարգիս Կարապետյանը WCIT2024/DigiTec համաժողովը կդառնա գլոբալ հարթակ, որը նպատակ ունի ուժեղացնելու տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը, խթանելու ներդրումները եւ ընդգծելու ՏՀՏ լուծումների կարեւորությունը տարբեր տարածաշրջաններում ու տնտեսություններում:

Համաժողովի օրակարգը մասնակիցների լայն աշխարհագրություն է ընդգրկում՝ ավելի քան 2,000 միջազգային պատվիրակներ կայցելեն Հայաստան միջոցառման օրերին: Մասնակիցներին բացառիկ հնարավորություն կունենան մասնակցելու համաշխարհային նորարարական եւ տեխնոլոգիական լավագույն արդի փորձի փոխանակմանը, ինչպես նաեւ՝ մասնակիցը դառնալու առաջադեմ լուծումների բազմաբովանդակ հանդիպումների: Համաժողովն Արհեստական բանականության (ԱԲ) ապագայի եւ դրա սոցիալական ազդեցությունը եւ էթիկան ձեւավորող կարեւորագույն թեմաների շուրջ մի շարք միջոցառումներ է նախատեսում անցկացնել:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐ ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ

2 ԴՊՐՈՑ ԿԴԱՌՆԱ ԷՆԵՐԳԱԱՆԿԱԽ

«Ակբա» բանկի, «Հայաստան» համահայկական հիմնադրամի եւ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի համագործակցությամբ Վայոց ձորի Շատին եւ Աղավնաձոր համայնքների երկու դպրոցների տանիքներին արեւային կայաններ կտեղադրվեն, որի արդյունքում դպրոցները տարեկան 5 միլիոն դրամ կխնայեն: Խնայված միջոցներով նոված դպրոցների առաջինից չորրորդ դասարանի երեխաները կստանան անվճար սնունդ:

Ծրագիրն իրականացվում է Visa Բարերար քարտապանների կատարած անկանխիկ վճարումներից ձեւավորվող միջոցներով, որոնք «Ակբա» բանկն իր սեփական միջոցների հաշվին ուղղում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի հատուկ հաշվեհամարին: «Շատ կարեւոր է, որ դպրոցական հասակից երեխաները տեսնեն, թե նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ ձեւավորված խնայողություններն ինչ արդյունք կարող են գրանցել: Այս նախագծով դպրոցներում լուծելու ենք երկու խնդիր. դպրոցները դառնալու են էներգախնայող եւ կրթական բարձր համակարգ է ձեւավորվելու այնտեղ: ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի իրականացրած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որքան որակյալ է երեխաների սնունդը, այնքան բարձր է նրանց կրթության որակը»,- նշել է «Ակբա» բանկի հասարակայնության հետ կապերի թիմի ղեկավար Նարեկ Ասատրյանը:

«Սա հետաքրքիր նախաձեռնություն է, որի շրջանակում տեղադրվող արեւային կայանները օգնելու են դպրոցներին խնայողություններ անել եւ գումարը ծախսել դպրոցականների սննդի համար: Հայաստանում շատ արեւ կա եւ արեւային էներգիան կարող է օգնել. այս ամենը հիանալի է», - նշել է ՀՀ-ում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի գրասենյակի տնօրեն Նանա Սկաուն:

«Սա շատ լավ ծրագիր է, որն իրականացվում է Պարենի համաշխարհային ծրագրի կողմից: Հիմնադրամը, լինելով այլընտրանքային էներգիայի ջատագով եւ կարեւորելով համայնքների զարգացումը, մեծ ուրախությամբ ներառվել է այս համագործակցության մեջ: Ծրագիրն իրականցվում է «Ակբա» բանկի եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի համատեղ թողարկած Visa Բարերար քարտապանների կատարած գործարքներից ձեւավորված միջոցներով»,- նշել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրերի բաժնի ղեկավար Ջարուհի Ազնաուրյանը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 19 պատահար. 2 մարդ զոհվել է, 27-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՄԻԱՑԵԼ Է ԼԻԶԻՆԳԱՏՈՒՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ

«Յունիբանկը»՝ որպես լիզինգի շուկայի ակտիվ մասնակից, անդամակցել է «ՀՀ Լիզինգատուների Ասոցիացիա»-ին: Համագործակցությունը հնարավորություն կտա բարելավել լիզինգային գործարքի իրականացումը բոլոր կողմերի համար, ստանալ ոլորտային միասնական լուծումներ, որոնք կնպաստեն ճյուղային բարեփոխումներին եւ ոլորտի կատարելագործմանը: Բացի այդ, «Յունիբանկը» հնարավորություն կունենա անմիջականորեն մասնակցել ոլորտի օրենսդրական բարելավման աշխատանքներին:

«Հայաստանում լիզինգը՝ որպես ֆինանսական գործիք, արագ տեմպերով զարգանում է. բիզնեսն ըստ արժանվույն գնահատել է սարքավորումների եւ տեխնիկայի վարձակալելու առավելությունները: Մատչելի լիզինգի շնորհիվ փոքր եւ միջին բիզնեսը հնարավորություն է ստանում բարձրացնել արդյունավետությունն ու մրցունակությունը: Անդամակցությունը Լիզինգատուների Ասոցիացիան լայն հնարավորություններ է ստեղծում ոլորտում բարեփոխումներին մասնակից լինելու եւ հետագա զարգացմանը նպաստելու համար», - նշեց «Յունիբանկի» Վարչության նախագահի առաջին տեղակալ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման եւ վաճառքների տնօրեն Դավիթ Պետրոսյանը:

ՀՀ Լիզինգատուների Ասոցիացիայի նախագահ Արսեն Բազիկյանը նշեց, որ «Յունիբանկի» անդամակցությունը մեծ նշանակություն ունի ոլորտի համար: «Յունիբանկի» մասնաճյուղային ցանցը, լիզինգին հատուկ թիրախային խումբը եւ լիզինգի տրամադրման փորձը կարեւոր դեր կխաղան Ասոցիացիայի նպատակներին հասնելու համար:

Լիզինգատուների Ասոցիացիան կարեւոր դեր ունի լիզինգի ոլորտի զարգացման գործում՝ տրամադրելով համագործակցության այնպիսի հարթակ, որտեղ անդամները հնարավորություն ունեն քննարկել ոլորտային խնդիրները, փոխանակել լավագույն փորձը եւ առաջարկել բարելավումներ լիզինգի ոլորտում:

ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ

Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դըկոտինյին X-ի իր միկրոբլոգում տեղեկացրել է կանաչ պարտատոմսերի թողարկման մասին:

«ԶՖԳ-ն եւ Ազգային հիփոթեքային ընկերությունը սկսում են նախապատրաստել կանաչ պարտատոմսերի թողարկումը, որը կաջակցի երկրի հազարավոր ընտանիքների՝ էներգետիկ անցումային փուլում:

Հարմարավետություն եւ խնայողություն՝ ընտանիքների համար, ավելի քիչ էնեգետիկ կախվածություն՝ Հայաստանի համար»,- գրել է նա:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Լիլիան Սաֆավ Սուլայմանս (Lilyan Safav Silaiman), 19.04.2024-ին Երեւանի Հանրապետության հրապարակում կորցրել եմ անձնագիրս: Գտնողին խնդրում եմ զանգահարել +374 44 880195 հեռախոսահամարով:

«ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴ» 9

ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Հունիսի 25-ին առաջին ուստարվա արդյունքներն ամփոփվեցին Հայաստանում ապագա նորարարների կրթական ուղին ձեւավորող «Արհեստական բանականության (ԱԲ) սերունդ» ծրագրի դպրոցական նախագծում:



Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների հիմնադրամը (FAST) «Կոնգրես Երեւան»-ում կայացած մեծ միջոցառմանը գործընկեր կառույցների, ուսուցիչների, աշակերտների եւ վերապատրաստողների լայն համայնքի հետ ամփոփեց 2023-ի սեպտեմբերից ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համատեղ ՀՀ 7 մարզի 15 ավագ դպրոցներում փորձարկվող «ԱԲ սերունդ» ծրագրի 2023-2024 ուստարվա ձեռքբերումները՝ ներկայացնելով ծրագրի մասնակից 350-ից ավելի աշակերտի ուսումնական ուղին եւ ուսուցիչների վերապատրաստման արդյունքները:

Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԿԳՄՍ նախարարության Հանրակրթության վարչության պետ Թամարա Սարգսյանը. «Սա այն կարեւոր ծրագրերից է, որի մեկնարկն ուղղակիորեն աջակցում է կրթության ընդհանուր ռազմավարության իրագործմանը: Ծրագիրը ցույց տվեց, որ երեխաները կարող են ոգեւորված լինել կրթության բովանդակությամբ, վարակել ու վարակվել նախաձեռնողականության ոգով: Մեզ համար նշանակալի է, որ բոլորս կիսում ենք նույն տեսլականը եւ համատեղ աշխատում ծրագրի բարելավման եւ ընդլայման ուղղությամբ»:

ՀՀ ԲՏԱ նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանը, կարեւորելով արհեստական բանականության զարգացումներին հարմարվելու անհրաժեշտությունը, նշեց. «ԱԲ-ն արդեն մեր ներկան է, եւ կարեւոր է, որ այս ուղղությամբ կրթությունը սկսվի հենց դպրոցից: Ծրագրի աշակերտների նախագծային աշխատանքներում որակական տարբերությունն ակնառու է, եւ նախարարությունը հաստատակամ է աջակցելու ծրագրին՝ նպաստելով նրանց գիտելիքի կիրառմանը հատկապես մարզերում»:

FAST-ի Ռազմավարական ծրագրերի փոխնախագահ Սյուզաննա Շամախյանն էլ ամփոփեց ծրագրի բաղադրիչներն ու նպատակը. «Մոտիվացիան մեկն է՝ կրթել ապագա նորարարների՝ հնարավորություն տալով իրենց ներուժն իրացնելու Հայաստանում եւ ի շահ Հայաստանի: Առանցքայինն այս ծրագրում մրցունակ կրթության հասանելիության ընդլայնումն է. դրան է ուղղված մաթեմատիկահեն կրթության մեծ բաղադրիչը, որը աշակերտներին տալիս է նաեւ ԱԲ-ին կից ոլորտներում՝ ռոբոտաշինության, ինժեներիայի մեջ ներգրավվելու հնարավորությունը: Կարեւոր է նաեւ մասնագիտական կողմնորոշման կողմն ու անմիջականորեն ոլորտային կառույցների եւ մասնագետների հետ ծանոթանալու սովորողների փորձառությունը: Python ծրագրավորման լեզվի ուսուցումն էլ այն կարեւոր տեխնոլոգիական հիմքն է, որն անհրաժեշտ է սովորողների մասնագիտական կայացման համար»:

Միջոցառման երկրորդ կեսում «Այբ» կրթական հիմնադրամի հետ միասին ամփոփվեցին FAST-ի հետ գործընկերության շրջանակում իրականացված Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման արդյունքները՝ եզրափակվելով «ԱԲ սերունդ»-ում ներգրավված մաթեմատիկայի եւ ԹԳՀԳ (Python)-ի 39 ուսուցիչների հավաստագրերի հանձնման արարողությամբ: Հիմնադրամի գործադիր տնօրեն Գոհար Հովհաննիսյանը, շնորհալություն հայտնելով վերապատրաստման պատասխանատու գործն իրենց վստահելու համար, առանձնահատուկ կարեւորեց վերապատրաստողների եւ ուսուցիչների դերը ծրագրի հաջողման գործում:

ԿԱՍՊԵՐՍԿԻ

Android ՍԱՐՔԵՐԻ ՎՐԱ ԳՐՈՀՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԿՐԿՆԱՊԱՏԿՎԵԼ Է

«Կասպերսկի» ընկերությունը 2024-ի առաջին եռամսյակում աշխարհում կանխել է Android սարքերի վրա վնասաբեր, գովազդային կամ անցանկալի բջջային ծրագրերի օգտագործմամբ 10,1 միլիոն գրոհ այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կանխվել է մոտ 4,95 միլիոն նման գրոհ:

Ընկերության տվյալներով՝ ընթացիկ տարվա հունվար-մարտին բջջային սարքերի համար ամենատարածված սպառնալիքը դարձել է գովազդային ԾԱ-ն (AdWare)՝ հայտնաբերված սպառնալիքների ընդհանուր թվի 46 տոկոսը:

Հայտնաբերվել է ավելի քան 389 հազար վնասաբեր տեղադրման փաթեթ, որոնցից 11 729 փաթեթը բջջային բանկային տրոյացիներ էին, իսկ 1990-ը՝ շորթող տրյացիներ: Իսկ 2023-ի նույն ամիսներին գովազդային ԾԱ-ի մասնաբաժինը կազմել է հայտնաբերված բոլոր սպառնալիքների 34,8%-ը, հայտնաբերվել է 307 529 վնասաբեր տեղադրման փաթեթ, որոնցից 57 601 փաթեթը բջջային բանկային տրոյացիներ էին, 1 767-ը՝ բջջային շորթող տրոյացիներ:

«Կասպերսկի»-ի փորձագետները պարզաբանում են, որ Android-ի համար նախատեսված վնասաբեր եւ անցանկալի ԾԱ-ի հայտնաբերված նմուշների թիվը նվազել է 2023-ի չորրորդ եռամսյակում եւ կրկին աճել 2024-ի առաջին եռամսյակում: 2022-ի չորրորդ եռամսյակում վնասաբեր տեղադրման փաթեթների քանակի նկատելի անկումից հետո՝ կապված Trojan-Dropper.AndroidOS.Ingopack-ի ակտիվության նվազման հետ, 2023-ի առաջին եռամսյակում գրանցվել է վնասաբեր ԾԱ-ի նոր նմուշների փոքր աճ:

Միեւնույն ժամանակ, բանկային տրոյացիների նոր եզակի տեղադրման փաթեթների քանակը մնում է ցածր մակարդակի վրա, այնուամենայնիվ, Trojan-Banker-ների գրոհների ընդհանուր թիվը 2024 թվականի առաջին եռամսյակում շարունակել է աճել: Նաեւ, 2023-ի չորրորդ եռամսյակում տեղի ունեցած աճից հետո, որը պայմանավորվել է Rasket ընտանիքի մեծ թվով շորթող ծրագրերի հայտնվելով, շորթիչների տեղադրման փաթեթների քանակը վերադարձել է սովորական մակարդակ՝ Rasket-ի ակտիվության նվազման ֆոնին:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆ»

ՔԵՎԻՆ ՍՓԵՅՍԻԻ ԱՅՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ինչպես արդեն հայտնել էինք՝ Երեւանում անցկացվող ամենամյա ամենամեծ կինոփառատոնը՝ «Ոսկե ծիրանը» այս տարի կմեկնարկի հուլիսի 7-ից:

Փառատոնին հրավիրված են մի շարք հայտնի հյուրեր, որոնցից մեկը Քեւին Սփեյսին է, ով շատերի համոզմամբ՝ բոլոր ժամանակների լավագույն արտիստներից մեկն է:

Սփեյսին ոչ միայն կրկնակի Օսկարակիր է, այլեւ արժանացել է Լոուրենս Օլիվյեի մրցանակին լավագույն թատերական դերակատարման համար, ինչպես նաեւ «Ոսկե գլոբուս» է ստացել՝ որպես «Հեռուստասերիալում լավագույն դերասան»:

Չնայած նրան, որ դերասանի Հայաստան գալու փաստի համար ուրախացել են շատ կինոմաններ, ֆիլմերով, այս փառատոնով հետաքրքրված շատ մարդիկ այդքան էլ հաշտ չեն այս փաստի հետ:

Դերասանի՝ Հայաստան գալու փաստի հետ համաձայն չլինելու պատճառներն ակնհայտ են:

Նշենք, որ դերասանը նկարահանվել է հայտնի «Թղթե տուն» Netflix սթրիմինգային նախագծով հեռարձակված հեռուստահաղորդումում:

Սկանդալները սկսվում են հենց այստեղից. բանն այն է, որ թատրոնի եւ կինոյի մեծագույն դերասան Քեւին Սփեյսիին մեղադրում էին սեռական ոտնձգությունների համար: Մեղադրանքներից մեկը Սփեյսիին առաջադրել էր դերասան Էնթոնի Ռեփին, նշելով, որ հոլիվուդյան հայտնի դերասանն իր նկատմամբ սեռական ոտնձգություններ է կատարել, երբ ինքը 14 տարեկան էր:

MRC կինոստուդիայի տվյալներով՝ սեռական սկանդալի պատճառով «Թղթե տուն» նախագծի թիմը նախ ստիպված է եղել ժամանակավորապես դադարեցնել վեցերորդ սեզոնի նկարահանումները, այնուհետ վերաշարադրել սցենարը եւ կրճատել էպիզոդների թիվը՝ 13-ից 8-ի:

Նման սկանդալները վերհիշելուց հետո՝ հայ կինոսերները արդեն երկու մասի բաժանվեցին, որոնց մի մասն անհամբերությամբ է սպասում դերասանի ժամանելուն, իսկ մյուս մասը դերասանի գալը համարում է սեւ ՓիԱր, քանի որ անգլալեզու քննարկման հարթակներում դերասանը համարվում է «trigger»:

Անդրադառնալով դերասանի անցած ուղուն՝ պետք է նշել, որ նա կերպարներ է կյանքի կոչել 1990-2010-ականների ամենաակնառու ամերիկյան ֆիլմերում, ինչպիսիք են «Քեյ-Փեքսը» (2001), «Յոթը» (1995), «Ամերիկյան գեղեցկություն» (1999), «Կասկածելի դեմքերը» (1996), «Խաղաթղթե տնակը» հեռուստասերիալը (2013-2017) եւ այլն:

Քեւին Սփեյսին համագործակցել է վերջին 40 տարվա լավագույն ամերիկացի ու բրիտանացի ռեժիսորների՝ Դեւիդ Ֆինչերի, Ալան Փարքերի, Սեմ Մենդեսի, Էդգար Ռայթի, Քըրթիս Հենսոնի, Ջեյ. Սի. Չենդորի, Ջոն Լասեթերի, Դունքան Ջոնսի, Մայք Նիքոլսի, Բրայան Սինգերի, Ջեյմս Ֆոուլիի, Ալան Ջեյ. Փաքուլայի եւ այլոց հետ՝ էկրանին հայտնվելով Բրեդ Փիթի, Մորգան Ֆրիմենի, Ալ Պաչինոյի, Քիմ Բեյսինգերի, Ռասել Քրոուի, Սեմ Ռոքուելի, Գուինեթ Փելթրոուի, Ջեֆ Բրիջեսի, Ջեք Լեմոնի, Անետ Բենինգի պես աստղերի կողքին:

Նշենք նաեւ, որ «Ոսկե ծիրան»-ն այս տարի առանձնահատուկ անդրադարձ կկատարի երկու մեծությունների՝ Շառլ Ազնավուրի եւ Սերգեյ Փարաջանովի 100-ամյա հոբելյաններին:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԷԼԻՆԱ ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ՆԱՀԱՆՋԵԼ Է. WTA

Հայ թենիսիստուհի Էլինա Ավանեսյանը WTA դասակարգման թարմացված աղյուսակում նահանջել է 7 կետով եւ զբաղեցնում է այժմ 81-րդ տեղը: 21-ամյա մարզուհին ունի 831 միավոր:

Լավագույն տասնյակում փոփոխություններ չեն եղել: Դասակարգման աղյուսակը շարունակում է գլխավորել Իգա Շվյոնտեկը (Լեհաստան, 11695 միավոր):

Նրան հաջորդում են Կոկո Գաուֆը (ԱՄՆ, 8128), Արինա Սաբալենկան (Բելառուս, 7841), Ելենա Ռիբակինան (Ղազախստան, 6026) եւ Ջեսիկա Պեգուլան (ԱՄՆ, 5025):

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Էլինա Ավանեսյանը հանդես կգա Հայաստանի դրոշի ներքո:

ԵՎՐՈ–2024–Ի ԸՆԹԱՑՔԸ

Եվրո-2024-ի խմբային փուլի երրորդ տուրի նախավերջին խաղային օրվանից հետո հայտնի են դարձել այն 5 հավաքականները, որոնք կորցրել են փլեյ-օֆֆ փուլի ուղեգիր նվաճելու հնարավորությունը:

B խմբից պայքարը չի շարունակի Խորվաթիայի հավաքականը: Ի դեպ, ԱԱ-2022-ի բրոնզե մեդալակիրն առայժմ երրորդ տեղ գրաված միակ հավաքականն է, որը զրկվել է փլեյ-օֆֆի ուղեգրից: C խմբում պայքարից դուրս է մնացել Սերբիայի հավաքականը, որը զբաղեցրել է վերջին՝ 4-րդ տեղը:

Մինչեւ այդ հաջորդ փուլում պայքարը շարունակելու հնարավորությունից զրկվել էին Լեհաստանը, Ալբանիան եւ Շոտլանդիան:

Հիշեցնենք, որ խմբերում առաջին եւ երկրորդ տեղ գրաված թիմերը վաստակում են փլեյ-օֆֆի ուղեգիր, հաջորդ փուլ դուրս գալու հնարավորություն են ստանում նաեւ լավագույն արդյունքով երրորդ տեղ զբաղեցրած եւս 4 թիմեր, որոնցից մեկը Սլովենիայի հավաքականն է:

ԵՎՍ ՄԵԿ ԱԹԼԵՏ ԿՈՒՆԵՆԱՆՔ

Փարիզում հուլիսի 26-ից օգոստոսի 11-ը կայանալիք ամառային 33-րդ Օլիմպիական խաղերում Հայաստանն այս պահի դրությամբ 15 ներկայացուցիչ ունի:

Խաղերին մասնակցելու իրավունք են ստացել նաեւ լողորդներ Արթուր Բարսեղյանը, Վարսենիկ Մանուչարյանը եւ վազորդ Ալիսոն Հալվերսոնը: Նրանք իրենց ուժերը կփորձեն 100 մետր տարածություններում. լողորդներ Արթուր Բարսեղյանը՝ ազատ ոճում, Վարսենիկ Մանուչարյանը՝ բատերֆլայում, իսկ Հայաստանի աթլետիկայի հավաքականի անդամ Ալիսոն Հալվերսոնը՝ արագավազքում: Օլիմպիական խաղերին մասնակցության հնարավորություն ունի նաեւ եռացատկորդ Լեւոն Աղասյանը:

ԼՈՒՐԵՐ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ Վենետիկի արվեստի 60-րդ միջազգային բիենալեի Հայաստանի ոչ պաշտոնական տաղավարում՝ AKNEYE ֆիջիթալ սփեյսում, կայացել է միջոցառում՝ նվիրված Վենետիկի միջազգային բիենալեին Հայաստանի առաջին մասնակցության 100-ամյակին:

Նախագծի հեղինակներն էին «ՍԱՐԵՌ» մշակութային ՀԿ-ն եւ Fastex-ի «AKNEYE»-ը:

Միջոցառմանը մասնակցում էին Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի տնօրեն Բելլա Իսահակյանը, Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն Մարինա Հակոբյանը, «ՍԱՐԵՌ» մշակութային ՀԿ-ի տնօրեն Էռնա Ռեւազովան, Վենետիկի Կա Ֆոսկարիի համալսարանի պրոֆեսոր Սոնա Հարությունյանը, Վենետիկում ՀՀ պատվո հյուպատոսության ներկայացուցիչները, բիենալեի կազմակերպչական թիմի անդամները:

Միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես են եկել Fastex-ի գլխավոր տնօրեն Վախթանգ Աբրահամյանը եւ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ, Վենետիկի 60-րդ միջազգային բիենալեի հայկական պաշտոնական տաղավարի հանձնակատար Սվետլանա Սահակյանը:

Միջոցառման շրջանակում ներկայացվել է «Սարյանն ու Վենետիկը» խորագրով տեսաֆիլմը, որում անդրադարձ է կատարվել 100 տարի առաջ՝ 1924 թվականին, Մարտիրոս Սարյանի ջանքերով Վենետիկի արվեստի միջազգային բիենալեում ներկայացված 6 հայ նկարիչների 20 ստեղծագործությունների պատմությանը:

AKNEYE նախագծի ստեղծագործական թիմն իր տաղավարում վերստեղծել էր հայկական պատը, ինչպես նաեւ Մարտիրոս Սարյանի հայտնի «Հայաստան» կտավը, որն աչքի վրա նկարել էր հայ նկարիչ Վիկտորիա Շահբազյանը:

ՉԻ ՄԱՄՆԱԿՑԻ «ՍԼԱՎՅԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ»–ԻՆ

Նկատի ունենալով Հայաստանի հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության միջեւ պաշտոնական հարաբերությունների դադարեցման մասին ՀՀ վարչապետի հայտարարությունը՝ մրցույթի հայաստանյան պաշտոնական պատվիրակությունը որոշում է կայացրել չմեկնել Բելառուս եւ մասնակցություն չունենալ այս տարի հուլիսի 8-18-ը Բելառուսում տեղի ունեցող «Սլավյանսկի բազար 2024» ամենամյա միջազգային հեղինակավոր մրցույթին:

Աշխարհի բոլոր ժողովուրդներին միավորում է մեկ լեզու՝ մշակույթը, ուստի անհնար է չգնահատել տարիներով ստեղծված հայ - բելառուսական մշակութային հարաբերությունները:

Լիահույս ենք, որ ստեղծված քաղաքական թնջուկը մոտ ապագայում սիրո եւ համերաշխության ճանապարհով կուսենա իր հանգուցալուծումը եւ կշարունակվեն երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունները:

Հիշեցնենք, որ «Սլավյանսկի բազար» մրցույթում այս տարի Հայաստանի պատվիրակներն էին բազմաթիվ մրցույթների դափնեկիր երգչուհի Սյուզաննա Մելքոնյանը եւ 9-ամյա Յանա Ստեփանյանը:

«Սլավյանսկի բազար» ամենամյա միջազգային հեղինակավոր մրցույթի հայաստանյան պաշտոնական պատվիրակության ղեկավար, Երեւանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի եւ արվեստի պետական քոլեջի տնօրեն Վրեժ Կիրակոսյան:

● *Հուլիսի 6-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Սիրո խոստովանություն» կատակերգությունը: Տոմսերի արժեքը՝ 3000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՎԻԶԱ

ՀԱՐՑ. Ո՞րն է Շենգենյան վիզայի եւ ազգային վիզայի միջեւ տարբերությունը:

Գայանե Առաքելյան (23 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Շենգենյան վիզան (C տեսակ) տրվում է Շենգեն գոտու անդամ երկրներից որեւէ մեկի կողմից եւ վավեր է Շենգենյան երկրներում կարճ ժամանակահատվածով մնալու համար՝ սահմանափակված մինչեւ 90 օր 180 օրվա ընթացքում:

Եվրոպական օրենսդրությամբ այդպիսի վիզաների ստացումը եւ թողարկումը կատարվում է նպատակավայրի երկրի հյուպատոսության կողմից: Մի քանի Շենգենյան երկրներ ճամփորդելու դեպքում հիմնական նպատակավայրը որոշվում է ճամփորդության նպատակով կամ մնալու տեւողությամբ: Շենգենյան երկրում մնալու ծառայողական պատճառները գերակշիռ են դրա՝ այլ երկիր զբոսաշրջության, ընտանեկան կամ մասնավոր հիմքով այցելությունների նկատմամբ:

«ԹիԷլԷսկոնտակտ» ընկերություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ազգային երկարաժամկետ վիզան (D տեսակ) վավեր է միայն վիզա տրամադրող երկրում հաստատվելու կամ ավելի քան 90 օր մնալու համար: Ազգային վիզան, այնուամենայնիվ, թույլ է տալիս տարանցել այլ Շենգեն երկրների միջով, եւ որոշների համար (Իտալիայի քաղաքացու երկարակյաց ամուսին, աշխատողներ, ուսանողներ կամ այցելուներ) այն նաեւ թույլ է տալիս ազատորեն ճամփորդել Շենգեն գոտու ողջ տարածքում:

ԿՈՌՈՒՊՑԻԱ

ՀԱՐՑ. Ի՞նչ է իրենից ներկայացնում Կոռուպցիայի ընկալման համաթիվը:

Ջոհրաբ Սայադյան (37 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. «Թրանսփարենսի ինթերնեշնլ»-ի (ԹԻ) Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ) գնահատում եւ դասակարգում է պետությունները/տարածքները՝ ելնելով այն բանից, թե երկրի հանրային ոլորտը (պետական եւ համայնքային մարմիններ) որքանով է ընկալվում որպես կոռումպացված: Այն բաղադրյալ համաթիվ է, որը ստացվում է իրենց բնագավառներում ճանաչում ունեցող մի շարք կազմակերպությունների կողմից անցկացված հարցումների եւ գնահատումների՝ կոռուպցիային առնչվող տվյալների համադրությամբ:

«Թրանսփարենսի ինթերնեշնըլ»

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ԿԸՀ-ն կոռուպցիայի վերաբերյալ աշխարհում ամենից լայնորեն գործածվող ցուցանիշն է:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Սերբիայի Նովի Սադ քաղաքում ընթացող հունահռոմեական ոճի ըմբշամարտի Եվրոպայի երիտասարդական (U17) առաջնության եզրափակչում Սեյրան Կիրակոսյանը դարձել է փոխչեմպիոն, իսկ Նարեկ Գրիգորյանը՝ բրոնզե մեդալակիր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+7 +12 +25 +29
Կոտայքի լեռներ	+8 +10 +24 +27
Կոտայքի նախալեռներ	+19 +21 +30 +33
Գեղարքունիք	+7 +11 +24 +28
Լոռի	+9 +14 +25 +28
Տավուշ	+14 +19 +29 +33
Արագածոտնի լեռներ	+7 +9 +23 +27
Արագածոտնի նախալեռներ	+16 +20 +29 +33
Արարատ	+19 +21 +34 +36
Արմավիր	+18 +20 +34 +36
Վայոց ձորի լեռներ	+8 +10 +24 +27
Վայոց ձորի նախալեռներ	+17 +19 +33 +35
Սյունիքի հովիտներ	+18 +21 +31 +34
Սյունիքի նախալեռներ	+12 +16 +25 +28
ԼՂՀ	+12 +15 +24 +26
Երեւան	+22 +24 +32 +34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.6.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*